

18859

891.99

4-24

Phfhu

1894

Արտատպած ԹԱՏՐՈՆ հանդեսից.

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Վատակերգութիւն մէկ արարուածով,

հեղ. ՓԱՌՆԱԿԷՍԻ

ԳԻՆՆ Է 25 Կ.

391.99

Կ-24

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

Типография М. Варталидзе, Гановская ул. д. № 3.

1894

4.

ԲԱՆԱՍՏԵՂԺ

Մատակերգութիւն մէկ արարուածով,

հեղ. ՓԱՌՆԱԿԷՍԻ

$$\begin{array}{r} 1001 \\ \hline 4340 \end{array}$$

2003

ᠬᠠᠨᠪᠠᠭ ᠤ 25ᠤ

Լ 25 Կ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
 *Ս.Ս.Ր.Ա. ՓԱԲԼԻՑԱՆԱԿԱՆ ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
 7/Ճ--1922
 ԵՄԵՂԱ, ՄԵՍԻՔԻՅԱ
 ՍԵՐԱՆԻՇԱՆԻ ՄԵԼԱՆ

ԹԻՓԼԻՍ

Տպարան Մովսես Վարդանեանի

Типографія М. Вартанянца, Гановская ул. д. № 3.

189-1

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք.

1. Միհրան Հրահատեան՝ ուսուցիչ . . . 22 տարեկան
2. Յոլակ Ճերմակեան, ժողովրդական թերուս
փաստաբան 40 »
3. Դաւիթ, Միհրանի ծառան 20 »
4. Թորոս, Յոլակի ծառան 30 »

Անցքը պատահում է Ա քաղաքում.

Дозволено Цензурою Тифлисъ, 13 Мая 1894 г.

Գործող անձանց նկարագիրը.

1. ՄԻՀՐԱՆ ՀՐԱՀԱՏԵԱՆ.—Ինչ ունի չունի՝ թափել է իւր չորերի վրայ: Հագնում է չառ կոկ և եւրոպական մաքուր չորեր: Գործ է ածում պէնսնէ, բարակ ձեռնափայտ, ձեռնոց և ծածկում կլոր, բայց լայնեզերք եւրոպական փափուկ դըլխարկ: Նորածիլ բեխերը միշտ դէպի վեր է սրում և թողնում է սրածայր կարճ միրուք:
2. ՅՈՒԼԱԿ ձԵՐՄԱԿԵԱՆ.—Հագնում է երկայն հնամաշ սև սերթուկ՝ և կօկարդանիչ նոյնպիսի գլխարկ. անդրափարտիքը շագանակագոյն չալից: Հաստ ձեռնափայտ, միրուքի մէջտեղը ածելած և բեխերը միշտ ուղղուած դէպի բերանը՝ ի նշան արբեցութեան:
3. ԴԱՒԻԹ. Սև թաղիքէ գլխարկ, կարճ և դեղին չուխա, կարմրագոյն գուլպէքը քաշած մինչև ծընկները, հագին չուստ, սև դադաքից արխալուխ և կաշէ հասարակ գօտի:

4. ԹՈՐՈՍ. Ծառայողի հնամաշ գլխարկ, կօկարդը պոկած, որի տեղը երևում է: Հագնում է սև չուխա և կապում է արծաթեայ հասարակ գօտի. գործ է ածում երկայնավիզ կօշիկներ:

Բենը ներկայացնում է մի հասարակ սենեակ՝ աղքատ կահաւորութեամբ: Մի սեղան գրքերով, լրագրներով, տետրակներով լի, չորս արոտ, սեղանի վրայ մի գոյգ մոմակալ, մի ապակեայ ծաղկաման, մի հայելի եւ մի լամպա: Մեջտեղից եւ կողքերից դռներ. աջակողմեան պատի վրայ երկու լուսամուտ: Վարագույրը բացուելիս՝ բեմը դատարկ է:

ԲԱՆԱՍՏԵՂԾ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷՎ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԴԱԿԻԹ. (Դրսից), Լաւ, լաւ, աղա ջան: (Ներս գալով յատակի երկայն չօթքը ձեռքին) Գնաց. . . անշախ պրծանք (մօտենում՝ վերցնում է սեղանի վրայի դատարկ լամպարը) էլի դարդակել ա. . . ամէն գրչեր մի գրուանքայ նաւթը հէրիք չի անում... գրում ա՛հ հա գրում, չի էլ քօռանում: Գրածն էլ մի բան ընի՛, ջհանդամը, մի օր հարցրի՛ ասա խաղ եմ գրում: Սաղ աչքանի աչքդ էլ նոր եմ տեսնում, աչքդի ջուղտ աչքն էլ որ քօռ չընի՛ ի՛նչ լաղաթ: Մի խօսքով, ուրիշ ջուռա աղա ա: Մին մին, մէկ էլ ես տեսնում՝ ձէնը գցեց պուխը, միթամ թէ՛ խաղ ա ասում: Մի չնոհրով ձէն էլ ա ունենայ՝ ո՞վ ինչ կասի: Ընէնց ա օւնում՝ ոնց որ գէզի գլխին նստած ատամնին թափած քոսոտ չուն: Վախտ վախտ, աղբէր, ի՛նչ սուտ ասեմ, դրա խաղ ասիլու վրայ փրթկունս որ չի՛ պրծնում՝ խտակ դիւտում ա. . . հէրսիցը քիչ ա մնում ինձ ուտի.... մէկ էլ տեսար աչքերը խփեց ու բերանը բաց արաւ... էլ պաղլէց, դուռակ, էլ ես ի՛նչ գիտեմ դուրին ու չուղակ... բան չի թողնում, որ չասի: Ինքն էլ, միթամ, վարժա-

պետ ա ոչ բարով... տնաքանդը հայերէն ուշուց տալ էլ չի գիտում: Էս քանի օրս էլ աչքումս մի թահար փոխուել ա... քնած տեղն էլ ա խօսում... խօսելիս էլ եա լաց ա ընում, եա շուտ շուտ ինչ որ Աննամանի անուն ա տալի: Ես ասեմ էդ Աննամանը ով որ որ ա՝ խիստ ա դուր եկել իրան, որ եախիցը ձեռք չի քաշում: Մի օր հարցրի՝ խօսքը կտուրը գցեց ու վրէս չարացաւ, ամա ոնց որ վարաւուրդ եմ անում՝ մի բան կայ, Աստուած վերջը բարի անի... մախլաս: Ո՛ւր ա, Աստուած տայ նշանուի՝ բալբի թէ վաղուան ասածի պէս գողնոցը մի քիչ խելք էլ ա բերի էդ օրհնածի հրմար, թէ չէ՝ մաննան բէշթար (*ծեռքի ասիի մէջ փշելով*) չը կայ (*մատը գլխին է դնում*) դարդակ ա: Խօսքը մերը, տունը մերը՝ ես էլ եմ միտքս փոխել, կարմիր գողնոց եմ ուղում, մարդու բան չ'ասէք: Պըտի նշանուիմ, աղբէր, տեսնենք քս առաջ կընկնեմ՝ թէ իմ աղէն: Թէ նա իր Աննամանն ունի՝ իմ խալլի Նուբարն էլ պակաս չի: Ամա ի՞նչ լաւ կըլնի էն վախտն է... ես նշանուած՝ իմ աղէն նշանուած... էլ մեր քէֆին քէֆ չի հասնի... ձէն ձէնի կը տանք ու մի դարար խաղ կը կանչենք: (*Երգում է չօտքով սրբելով սենեակը եւ շրջանաձեւ պարելով*).

Իմ սրտի դարդեր կը տամ (2)

Մասսայ հովին, թող տանի վեր,

Քեզ սիրող եարը ես եմ,

Կողպայ սարէն թող տանի վեր: } 2

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՆԱ ԵՒ ԹՈՐՈՍ.

ԹՈՐՈՍ. (*Դաւթի երգից յետոյ իսկոյն ներս գալով*)
Ջան, ջան, աղա Դաւիթ, ջան... .

ԴԱՒԻԹ. Վայ բէմուրաթ, վեր թռայ. . . դու ես:

ԹՈՐՈՍ. Հա, աղա Դաւիթ, հա, հա, հա. . . էս ուր ա աղէդ:

ԴԱՒԻԹ. Հրէս կը գայ. ես ի՞նչ գիտեմ ուր ա:

ԹՈՐՈՍ. Շոտ կը գայ:

ԴԱՒԻԹ. Հինգ օր էլ որ չը գայ՝ այնուամէն գցի: Չահլէս գնացել ա, տնաքանդը էնքան ուշուց ա տալի, որ անհետար: Դրուտ քու աղէն ոնց ջանավար ա. լաւ աղա մ:

ԹՈՐՈՍ. Հոգի ա, հոգի: Իմ աղէն աղակաթ ա, աղակաթ, սոված վարժապետ հօ չի:

ԴԱՒԻԹ. Աղակաթը ի՞նչ ա որ, Թորոս, պոզեր հօ չունի:

ԹՈՐՈՍ. Հալաթ որ ունի. աղակաթն էն ա, որ եանի ինչքան էլ որ գողութիւն անես՝ կը պրծացնի հա, պոզեր ունեցողից էլ բէթար ա:

ԴԱՒԻԹ. Ո՞նց թէ:

ԹՈՐՈՍ. Ընէնց էլի, չի թողալ, որ գողին եա մարդասպանին Սիրիր քշեն:

ԴԱՒԻԹ. (*Չարմանալով*) Ե՛ Ե՛ Ե՛ . .

ԹՈՐՈՍ. Բա՛ս. . . ընենց էլ լիզու ունի անիծածը, ընէնց գիր ու դալամ, որ նրա գրածը թէ բարի վրայ դնես՝ էն սհաթը կը հալի:

ԴԱՒԻԹ. Եդ ով ա ասում որ:

ԹՈՐՈՍ. Ո՛վ պըտի ասիլ, ինքը: Ամա երեւում ա որ դրուտ ա, սաղ օրը գեղըցիք մեր տան դռանը իրար գլխի կիտուած են, նրանք որ կան՝ աղիս կենդանի մատաղն են, խնդիրը ա, որ գրում ա, փող ա, որ պլոկում ա:

ԴԱՒԻԹ. Իմ աղէն էլ ա շատ գրում. (*ցոյց տալով սեղանի վրայի թղթերը*) հրէս տեսնում քս, դիփ նրա գրածըն ա, ամա որ քրքրեցիր՝ դատ չես գտնիլ: մէջը փուշ՝ օխտը հատիկ:

ԹՈՐՈՍ. Բա՛ս. . . . գիր եմ ասում, որ մը սհաթում 10—20 մանէթ առնի: Ամսական, ով ա գիտում, 1000 մանէթին փող չասի:

ԴԱԻԻԹ. Եւ . . . իմ աղեն՝ հաւատա երկու տարումն էլ 1000 մանէթի երես չըտեսնի:

ԹՈՐՈՍ. Շաբաթը երեք չորս անգամ մեր տանը կասես հարսանիք ըլնի: Աղբէր լաւ աղա ա . . . մէնակ հէնց կարտի փողը որ հաշուես՝ ամսական 30 մանէթ ինձ կարտի փող ա հասնում:

ԴԱԻԻԹ. Վայ իմ գլխին . . . կայ չըկայ՝ ամսական 5 մանէթն ա իմ ջանը:

ԹՈՐՈՍ. Ըհ, ես քու խելքին ի՞նչ ասեմ . . . հէնց էդ:

ԴԱԻԻԹ. Լաւ, ի՞նչ անեմ:

ԹՈՐՈՍ. Ի՞նչ պըտես անիլ . . . դու աւրի, ես քեզ հըմար լաւ տեղ կը գտնեմ:

ԴԱԻԻԹ. Ըղմրդ:

ԹՈՐՈՍ. Քու արևը:

ԴԱԻԻԹ. Բաս դու կը գամ . . . կաց ամիսը թամամի . . . 5 օր ա մնում:

ԹՈՐՈՍ. Օրհնած, մարդ էլ վարժապտի մօտ դուլլուդ անի՛, էն էլ հայ վարժապտի:

ԴԱԻԻԹ. Գրուտ ես ասում, աղբէր: Մի մարդ որ իշաբեռով ցախ առնի ու գրուանքով անձօխ՝ իմացի էլի . . . եղ ու պանրի հըմար էլ չեմ խօսում . . . դրանք էլ էն ու գետրա իմացի:

ԹՈՐՈՍ. Ով ա իմանում էդ բաներն էլ ինքն ա առնում:

ԴԱԻԻԹ. Բաս ի՞նչ:

ԹՈՐՈՍ. Ախր գիտեմ է՛ . . . էդ ջուրա մարդիկը կապէկ չեն սողացնի, ընենց տեղ գտնեմ քեզ հըմար, որ հէնց մէնակ բազարի առուարից 10 մանէթ ծըպըպացնես: Գուս արի, աղբէր, դու աւրի . . . գլխիդ ճարը տես:

ԴԱԻԻԹ. Թորոս ջան, մի բան խնդրեմ:

ԹՈՐՈՍ. Ի՞նչ:

ԴԱԻԻԹ. Մարդու բան չ'ասես՝ մի խոստովանք ունիմ:

ԹՈՐՈՍ. Ի՞նչ խոստովանք:

ԴԱԻԻԹ. Ամօթ ա ասիլ . . . ուզում եմ նշանուի:

ԹՈՐՈՍ. (Զարմացած) Ուզում ես նշանուի . . .

ԴԱԻԻԹ. Հա . . . ուզում եմ, հըմա, Թորոս ջան, փող չունիմ:

ԹՈՐՈՍ. (Աջ ձեռքով փակելով նրա քերանը) Սուս՝ ս՝ ս . . . ձէնդ կտրի:

ԴԱԻԻԹ. (Վեր թռչելով՝ յետ է նայում) Հը՛ . . . ով եկաւ որ:

ԹՈՐՈՍ. Ոչ որ . . . աղա հօ դժուէլ չես . . .

ԴԱԻԻԹ. Ի՞նչ ա ըլել որ:

ԹՈՐՈՍ. Նշանածդ բաժինը ունի՛:

ԴԱԻԻԹ. Չէ:

ԹՈՐՈՍ. Տուն ունի՛:

ԴԱԻԻԹ. Չէ:

ԹՈՐՈՍ. Փող ունի՛:

ԴԱԻԻԹ. Չէ:

ԹՈՐՈՍ. Զօռը քե . . . բաս ի՞նչ ունի:

ԴԱԻԻԹ. Սիրուն ա:

ԹՈՐՈՍ. Գարգալ բան ա: Սիրունութիւնը փոր չի կշտացնի: Մարդու կնիկը հէրիքա, որ քօռ, քաշալ ես չօլախ չըլնի, ընդուց եզը թէկուզ ինչքան ուզում ա՝ գէշ ըլնի . . . մնացածը եօլա կը գնայ, թաք ըլի՛ փող ունենայ:

ԴԱԻԻԹ. Որ չունի՛ ի՞նչ ուզեմ:

ԹՈՐՈՍ. Մի առնի:

ԴԱԻԻԹ. Ախր սիրում եմ:

ԹՈՐՈՍ. Ղալաթ ես անում:

ԴԱԻԻԹ. Շատ լաւն ա է՛:

ԹՈՐՈՍ. Գլուխդ քարին ես տալի:

ԴԱԻԻԹ. Բօյնվ . . . բուսաթնվ . . .

ԹՈՐՈՍ. Գլուխդ լիքն ա դարմանով: Հըմի դու գիտես . . . ինձ էն ասա, աղիդ գալը մօտ ա՛ թէ չէ:

ԳԱԻԻԹ. Որդի որ ա՛կը գայ, վախտն ա:
ԹՈՐՈՍ. Որ կը գայ, ասա աղէս ասում էր, տեղ չը գնայ,
տանը իրան սպասի:

ԳԱԻԻԹ. Ի՞նչ կայ որ:
ԹՈՐՈՍ. So, ես ի՞նչ գիտեմ, քեզ պէս մի տուտուց էլ
քու աղէն ա, նա էլ, ասում են, ուզում ա նշանուի: Իմ աղէն
միջի մարդ ա դառել:

ԳԱԻԻԹ. (Ջարմանալով) Ե՛էէ . . .

ԹՈՐՈՍ. Բնա . . . միթամ Մաթոս աղի աղջկանն ա
ուզում, թէ տան՝ լաւ ա . . . ինչ որ ասի՞ չը մոռանաս . . .
(գնում է):

ԳԱԻԻԹ. Լաւ, չեմ մոռանայ. (առաջ գալով) դու ա
գալի դրուտ ա տօ՛ . . . Աննման, հա Աննման . . . հըմմ . . .
էդպէս ասա է՛է . . . տեսել եմ, լաւ դադ ա . . . համա մեղք ա
աղջիկը: (մտածելով) Եաւաչ, լաւ բան միտքս ընկաւ . . .
վէգս ալու ա կանգնելու . . . կաց հըլա գնայ: Ես դրա ուշուց-
ների հախիցը էնպէս գամ, որ ինքն էլ զարմանայ . . . քանի
հեղճացայ՝ էնքան գլխիս նստեց . . . Ոգորմի Թորոսի հօրը, որ
չը գար՝ հօ չէի իմանայ (դրսից լսում է Միհրանի երգի
ձայնը):

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆԱ ԵՒ ՄԻՀՐԱՆ.

ԳԱԻԻԹ. Ըհը՛, եկաւ, խաղ ասելով ա գալի բաղտաւարը:
Արի, արի ու տես . . .

ՄԻՀՐԱՆ. (Ներս գալով՝ աւարտում է քթի տակ՝ եր-
գածի վերջին կտորը): Այստեղ ես, Դաւիթ:

ԳԱԻԻԹ. Ձէ, ըստեղ չ'եմ:

ՄԻՀՐԱՆ. Այ դու անպիտան, բաս ի՞նչ ես՝ թէ այստեղ չ'ես:

ԳԱԻԻԹ. Դէհ որ ըստեղ եմ, աղա, էլ ի՞նչ ես հարցնում:
ՄԻՀՐԱՆ. Բայց դա խօսակցութեան մի առանձին ոճ է,
տխմար դուքինա:

ԳԱԻԻԹ. (Կողմը) Սկսեց . . . դուբին . . . էս մէկ, (նրան)
դրուտ ա, աղա:

ՄԻՀՐԱՆ. Արտայայտութեան մի ձև, չուղակ:

ԳԱԻԻԹ. (Կողմը) Չուգակ . . . երկն . . . (նրան) շատ
ուղիղ ա, աղա:

ՄԻՀՐԱՆ. Քեզ ասում եմ, առանձին դարձուածք, դուռակ:

ԳԱԻԻԹ. (Կողմը) Երեք . . . դուք էլ համրեցէք . . . չատը
գնաց՝ քիչը մնաց:

ՄԻՀՐԱՆ. Միշտ գործածելի անմեղ և քաղաքականութիւն
ստացած հարցմունք, պաղլէց:

ԳԱԻԻԹ. (Կողմը) Ձնո . . . չէ . . . մի դուծին պըտի
թամամի:

ՄԻՀՐԱՆ. Սարի արջ տեղովդ ինձ վրայ ծիծաղում ես,
ի՞նչ է, սկստինա:

ԳԱԻԻԹ. (Կողմը) Եդ չէի լսել . . . ասա, ասա . . . (նրան)
ի՞նչ աղա . . . :

ՄԻՀՐԱՆ. մալլա՛տ:

ԳԱԻԻԹ. (Կողմը) Գլուխս մեռնի՛ թէ հասկացայ. համա
երևում ա շատ փխ խօսք ա:

ՄԻՀՐԱՆ. Պրոկլետայեա դուշա՛:

ԳԱԻԻԹ. (Կողմը) Ըհը՛ դուշա, ո՞ր խաչիցն էր, քաղցրացաւ,
հողի ջան ա ասում, (նրան) բաս ի՞նչ եմ թէ հողի ջան չեմ, աղա:

ՄԻՀՐԱՆ. Դարձեալ սուտ էլ ձեացար . . . Վօն ատսիւղա,
մերգաւէց . . . վօն . . . դուբս:

ԳԱԻԻԹ. Էլ ի՞նչ ես չարանում, աղա, վօն ես ուզում,
վօն կանեմ էլի: (Դուրս է գնում՝ եւ յետ դառնում) հաչիւս
թամդացրա՛:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Շատ վատ տեղից բռնեց անիծեալը,

երկու ամիս է՝ փող չեմ ստացել, (նրան) ուր ես գնում, խելօք կանց, կանց, Դաւիթ, էլ չեմ բարկանայ:

ԴԱԻԻԹ. Ձէ, պըտի գնամ . . . հաշիւս:

ՄԻՀՐԱՆ. Գժուլթիւն մի անի:

ԴԱԻԻԹ. Վալլահ, գնալու եմ, աղա:

ՄԻՀՐԱՆ. Ո՛ւր ես գնում ախր:

ԴԱԻԻԹ. Տեղ շատ կայ . . . ըսկի չըլնի՝ կեթամ Մաթոս աղոնց տուն:

ՄԻՀՐԱՆ. Մաթոս աղոնց տուն, (կողմը) այ քեզ խայտառակութիւն:

ԴԱԻԻԹ. Հա՛: Քանի անգամ ա ինձ կանչում ա, համա ես չէի ուզում գնայ, ամսական էլ 10 մանէթ ա տալի, (կողմը) պոչով սուտ ա հա՛ . . .

ՄԻՀՐԱՆ. Արի, արի, նա 10 մանէթ տուող չէ, հանաք էի անում:

ԴԱԻԻԹ. Էլ ինչ հանաք, հախս տուր, ես գնում եմ (ուզում է գնալ):

ՄԻՀՐԱՆ. Քեզ ասում եմ յետ արի, սարսազութիւն մի անի:

ԴԱԻԻԹ. Ձէ, աղա, 10 մանէթ ա . . . կը տաս՝ կը մնամ, թէ չէ գնում եմ:

ՄԻՀՐԱՆ. Գժուեցա՛ր, ինչ է . . .

ԴԱԻԻԹ. Սըանից գէնը ինչ կուզես՝ ասա, աղա, թէ գիժ եմ՝ հալբաթ Մաթոս աղէն էլ չի պահի:

ՄԻՀՐԱՆ. Ես քեզ ասում եմ յետ արի, Դաւիթ:

ԴԱԻԻԹ. Ես էլ ասում եմ, մին թուման կը տաս, կը գամ:

ՄԻՀՐԱՆ. Ձէ որ չեմ կարող տալ:

ԴԱԻԻԹ. Դու գիտես, աղա, ինձ ձեռք չի տայ:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Ի՞նչ անեմ . . . (նրան) լաւ, Դաւիթ, չես ուզում՝ արի ուրիշ տեղ տամ քեզ, ինչքան չը լինի՝ էլի իմ Դաւիթն ես . . . Մատթէոս աղի մօտ մի գնա, մեղք ես, կըխոտանայ՝ բայց չի տայ, մէկ էլ որ՝ շատ բարկացկոտ և ծեծող մարդ է:

ԴԱԻԻԹ. (Կողմը) Ձեռք կարայ խաբի (նրան) Ձի տայ ես 4ը ծեծի՝ նրա մօտից էլ դու կը գամ:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Ձի յաջողում . . . պէտք է պահել, մինչև գործը վերջանայ, (նրան) լաւ, մօտ արի, տալիս եմ:

ԴԱԻԻԹ. Ձեմ գալի, աղա:

ՄԻՀՐԱՆ. Մօտ արի քեզ ասում եմ:

ԴԱԻԻԹ. Աղա, վախում եմ ծեծես:

ՄԻՀՐԱՆ. Էլի օյինբազութիւնդ բռնեց. չեմ ծեծի, մօտ արի, մօ ըսլվան:

ԴԱԻԻԹ. Ձէ աղա, մինչև 10 մանէթ չըտաս՝ մօտ եկողը չեմ:

ՄԻՀՐԱՆ. Տօ, տալիս եմ էլի:

ԴԱԻԻԹ. Ձէ, աղա, մինչև չըհանես՝ չեմ գալ:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Տէր Աստուած, (հանելով) ահա, էս էլ հանեցի:

ԴԱԻԻԹ. Տուր գնեմ ջէբս . . .

ՄԻՀՐԱՆ. Ա՛ւ, անիծուած, հարամ լինի գլխիդ (փողը շարտում է դէպի նա):

ԴԱԻԻԹ. Որ հարամ ա ըլնելու, աղա չեմ առնում, գնում եմ (ուզում է գնալ):

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Այժմ էլ նազ է անում անիծածը, (նրան) լաւ, վեր առ ու մօտ արի:

ԴԱԻԻԹ. Սինչի չ'ասես թէ՛ Դաւիթ, հալալ ըլնի, փողերն առ ու մօտ արի՝ չեմ առնի ու չեմ գալ:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Տեսնում էք այս լրբին. (նրան) հալալ լինի, Դաւիթ, փողերն առ ու մօտ արի:

ԴԱԻԻԹ. Այ հըմի բան չոռնիմ ատելու (փողը առնում զրպանն է դնում) հըմի կը գամ (մտնելով) հըմի ինչքան կուզես՝ ծեծի, աղա, հալալ ըլնի ինձ էլ՝ քեզ էլ:

ՄԻՀՐԱՆ. (Ազանջից հանաքով բռնելով) Աստ տեսնեմ, սիրելի Դաւիթ, Մատթէոս աղին դու վաղուց ես ճանաչում:

ԴԱԻԻԹ. Ո՞նց չէ, աղա, շատ վաղուց, (կողմը) ես

մեռնիմ թէ՛ ըսկի երեսը տեսել եմ:

ՄԻՀՐԱՆ. Քանի տղայ ունի, Դաւիթ:

ԴԱԻԻԹ. Ես ասեմ տղայ չ'ունի, աղա:

ՄԻՀՐԱՆ. Աղջիկ էլ չունի:

ԴԱԻԻԹ. Աղջիկ ունի, աղա . . . հա, հա, մնց չէ՛ ունի:

ՄԻՀՐԱՆ. Քանի տարեկան կը լինի:

ԴԱԻԻԹ. Քանի . . . ես ինչ գիտեմ, աղա:

ՄԻՀՐԱՆ. Անունն ինչ է:

ԴԱԻԻԹ. Վալլահ խաբար չեմ, (կողմը) ասա սուտը

գետինը մանի:

ՄԻՀՐԱՆ. Այս լաւ է, որ բանից խաբար չէ, (նրան) սիրելի Դաւիթ, մի բան հարցնեմ՝ դրուստն ասա. Թէ որ ինձ համար Մատթէոս աղան հարցնելու լինի թէ ինչպէս մարդ է, խելքդ ինչ է կտրում, ես ինչպէս մարդ եմ, Դաւիթ:

ԴԱԻԻԹ. Ինչպէս մարդ ես . . .

ՄԻՀՐԱՆ. Հա, ինչ կասես:

ԴԱԻԻԹ. Ինչ կասեմ . . .

ՄԻՀՐԱՆ. Այո, ինչ կասես:

ԴԱԻԻԹ. Կասեմ ես չեմ գիտի, իրանից հարցրու:

ՄԻՀՐԱՆ. Այ դու եարամադ . . . էլի սկսեցիր քո մաս-
խարութիւնները. չէ, դրուստն ասիր. ինչ կասես:

ԴԱԻԻԹ. Ինչ պրտի ասեմ, ես դրուստը կասեմ էլի:

ՄԻՀՐԱՆ. Դրուստը ո՞րն է:

ԴԱԻԻԹ. Դրուստն էն ա, աղա, որ կասեմ լաւ մարդ ա,
ամա . . .

ՄԻՀՐԱՆ. Ամա ինչ, ասա, մի ամաչի:

ԴԱԻԻԹ. Ամա, գիտես էլի, աղա, կասեմ չատ ա ուշունց
տալի:

ՄԻՀՐԱՆ. (Գլխին հանաքով խփելով) So փուչ, իբրեւ
թէ այդ է դրուստը:

ԴԱԻԻԹ. Եանի սուտա, աղա:

ՄԻՀՐԱՆ. Լաւ, լաւ, գիտեմ որ հանաք ես անում,
թէ որ հարցնելու լինի՝ ի հարկէ կը գովես:

ԴԱԻԻԹ. Ել խօսք կայ աղա, որ չըգովեմ, բաս լեզուս չի
պատանձուի:

ՄԻՀՐԱՆ. Ապրիս, այսուհետեւ ես քեզ շատ պիտի սիրեմ,
տեսնում եմ, որ լաւ տղայ ես:

ԴԱԻԻԹ. (կողմը) Կըկակդես՝ կուտես, (նրան) խօսք կայ,
աղա, որ լաւ տղայ եմ: Դրուստ, քիչ էր մնում, թէ մոռանայի.
Յոլակ աղոնց գեադէն էր էկել աղա:

ՄԻՀՐԱՆ. Ինչ էր ասում:

ԴԱԻԻԹ. Յոլակ աղէն խաբար էր արել, որ տանը մնաս,
ինքը գալու ա:

ՄԻՀՐԱՆ. Շնտ կը գայ:

ԴԱԻԻԹ. Որտեղ որ ա՛ կը գայ աղա:

ՄԻՀՐԱՆ. Ար էդպէս է՝ դու գնա փառացում սպասիր և
երբ կը տեսնես, թէ գալիս է՝ իսկոյն վազիր ինձ իմաց արա:

ԴԱԻԻԹ. Լաւ, աղա. (գնում է):

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՄԻՀՐԱՆ, (միայնակ).

Կեցցէ իմ Յոլակը . . . վերջապէս կատարել է իր խօսքը.
Բայց անպիտան Դաւիթը քիչ էր մնում ձեռքիցս դուրս պրծնի . . .
Լաւ էր չ'յաջողեց, թէև տուժեցի, 5-ի տեղ՝ 10 բուբլի տուի.
Բայց վնաս չ'ունի, միայն թէ գործս յաջողի, Աննամանից չըզըր-
կուիմ: Ինչո՞ւ պէտք է երիտասարդ սրտերը ուղղակի միմեանց
հետ յարաբերութիւն չունենան տուանց միջնորդի, որ այսօր ես
էլ չըկարօտեմ Յոլակի պէս կեղեքիչ մի փաստաբանի, բայց
ստիպուած եմ ակամայ նրա միջնորդութեան դիմել մի անմեղ
և հրեշտականման արարած ազատելու մի խաւարամիտ ծնողի

ձեռքից, որպիսին Մատթէոս աղան է — իմ ապագայ աները: Եթէ մեր մեջ բոլոր փթած հայրերն ու մայրերը մի գլուխ ունենային՝ առանց խղճահարուածան մե սրի հարուածով կրթըն-ցնէի, որ նոցա տառապեալ աղջկերքը միանգամից ազատուէին բռնակալ հրէշներէ: 'Ի դէպ. այս երեկոյ այդ տէման էի որո-նում և ձեռաց մի գոգտրիկ ոտանաւոր գրեցի, տեսնես էլի սրտեղ է գրել մեր խելօք Դաւիթը. (որոնում է սեղանի վրայ): Հազար դու աստ, թէ թղթերս մի խառնի, թէ բանա-ստեղծի ցրիւ եկած թղթերը նրա սեղանի գնդին են կաղմում, բայց ումն ես ասում, կամ ինչ ես պահանջում անտաշ գիւ-ղացուց Դտայ մերջապես . . . (կարդում է):

Քանի, ասացէք, սիրուն աղջիկներ, Տատ ու մայրերիդ, մօրքուր, հայրերիդ հլու հպատակ՝ խամրիք, թոռոմիք, Զէ տեսնում ոչ որ ձեր ջերմ արցունքներ

ձռնաւն գրիչդ, պօետ, դու ընկեր երկասյրի սուրը բռնիր քո ձերքում, Աջ ու ձախ բռնն ուժգին հարուածով Անջատէ մարմնից քաւթաւ գլուխներ:

Այո, հողը վաղմւց արդէն պատրաստ է, կըգայ անպատճառ այդ թարմ հոսանքը: Ինձ պէս մտածողների թիւը մի մեծ բանակ է կաղմում այժմ: Բայց (դրսից լսում են Դաւ-թի քայլերը):

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆԱ. ԵՒ ԴԱՒԻԹ.

ԴԱՒԻԹ. (Յանկարծ ներս է ընկնում՝ հեաւով): Եկաւ, աղա ջան, եկաւ:

ՄԻՀՐԱՆ. Հա:

ԴԱՒԻԹ. Հետն էլ մի բոյով աղջիկ, աղա ջան:

ՄԻՀՐԱՆ. Աղջիկ (կողմը) անպատճառ նա կը լինի. (նրան) դէհ, շտապիր կարգի բերենք այստեղ. ամօթ է (սկսում են իրար անցնել եւ շտապ-շտապ կարգի բերել սենեակը, Միհրանը սեղանի երեսը, իսկ Դաւիթը աթոռ-ները, որի ժամանակ երկուսն էլ զանազան առարկաներ են վայր ձգում, գիրք, մոմակալ եւ այլն, կարգի բերելիս՝ շուտ շուտ տեղերը փոխում են, Միհրանը անցնում է աթոռներին, իսկ Դաւիթը գրասեղանին):

ԴԱՒԻԹ. Հըլա հեռու են, աղա ջան մի վախիլ, քուչի ծէրին են:

ՄԻՀՐԱՆ. Պրծիր քեզ ասում եմ, պաղլէց:

ԴԱՒԻԹ. (կողմը) Առա ինչ պաղլէցի վախտ ես գտել. (նրան) էս ա պրծայ, աղա ջան, մի բարկանայ. (կողմը) թոնդ քացախը իր ամանը կըճարացի:

ՄԻՀՐԱՆ. Տօ փնչ կենդանի, պրծիր էէ . . . չարժուիր . . .

ԴԱՒԻԹ. Վաղում եմ աղա, վաղում. (ծաղկամանը, որ շտապ սրբում էր՝ վայր է ձգում ու կոտրում). էս էլ քեզ շուտ արա:

ՄԻՀՐԱՆ. Այ քոռանաս դու, քոռանաս, սեղանի միակ գնդոս էլ կոտրեցիր: Հաւաքիր, հաւաքիր կոտրները, շուտ, տօ անիծած, թէ չէ՝ գլուխդ ջարդեցի հա:

ԴԱՒԻԹ. (կողմը հաւաքելով) Ի՜նչ, գլուխս չուչից ա չինած, որ ջարդես, (նրան) վնաս չունի աղա, չարը խափանեց.

ՄԻՀՐԱՆ. Խափանուիս ու կործանուիս դու . . . կաց գան ու գնան՝ ես գիտեմ ու դուն:

ԴԱՒԻԹ. (կողմը) Հա, թէ որ մնամ:

ՄԻՀՐԱՆ. Դուրս մտիկ տուր, տես եկան թէ չէ. (Դաւիթը դուրս է գնում). այ քեզ խայտառակութիւն . . . հիմի գան ու էսպէս տեսնեն՝ ինչ կասեն . . . ինչ եղաւ էլ անիծածը:



(Դաւիթը ներս է գալիս), հը՞, եկան:

ԴԱԻԻԹ. Եկան, աղա, համա (յետ յետ գնալով):

ՄԻՀՐԱՆ. Ի՞նչ ես յետ գնում, աօ անիծուած:

ԴԱԻԻԹ. (Կողմը) Հըմի որ հաստատ պլտի դնգատի-
(նրան) աղա ջան, եանդիլի եմ, եկողը Յոլակ աղի նման էր,
համա ինքը չէր, աղջիկն էլ մի ուսի աղջիկ էր . . . անցան գնացին:

ՄԻՀՐԱՆ. (Յարձակուելով վրան). Դու դեռ շատ օյին
պիտի բերես իմ գլխին . . . դուրս սարի արջ, (մի քանի հատ
խփում է), էլ աչքիս չերես:

ԴԱԻԻԹ. Աման, աղա ջան, էլ չեմ անի, ես մեղայ Աստծու . . .
(Վախճում է դուրս եւ դիպչում է ներս եկող Յոլակին):

Տ Ե Ս Ի Լ Զ.

ՆՂ ԵՒ ՅՈՒԱԿ, ԻՍԿ ՎԵՐՋԸ ԴԱԻԻԹ.

ՅՈՒԱԿ. Կամաց, աօ հայվարա . . . էս ի՞նչ է պատահել,
ի՞նչ տուրուղմբոց է:

ՄԻՀՐԱՆ. Ոչինչ, ոչինչ . . . հը՛, աղայ ես՝ թէ աղջիկ:

ՅՈՒԱԿ. Ոչ մէկն էլ չեմ:

ՄԻՀՐԱՆ. Վահ, միթէ դեռ չես գնացել:

ՅՈՒԱԿ. Գնալը գնացել եմ, բայց . . .

ՄԻՀՐԱՆ. Բայց . . .

ՅՈՒԱԿ. Բայց . . . (ծիծաղում է) հա, հա, հա, հա . . .

ՄԻՀՐԱՆ. Հը՛ . . . ի՞նչ ես ծիծաղում:

ՅՈՒԱԿ. Ախր ի՞նչպէս չը ծիծաղեմ, երբ որ, հա, հա,
հա . . . ծիծաղելի է . . . հա, հա, հա, հա . . .

ՄԻՀՐԱՆ. Զը լինի չի յաջողում:

ՅՈՒԱԿ. Յաջողելը կը յաջողի, եթէ միայն . . . հա, հա,
հա . . .

ՄԻՀՐԱՆ. Եթէ միայն ի՞նչ, ախր է . . . ինձ սպանելու
հալ ունիս:

ՅՈՒԱԿ. Եթէ միայն . . . հա, հա, հա . . . երկայն մազեր
թողնես, հա, հա, հա . . . բանաստեղծական մազեր . . . հա,
հա, հա . . . աղջիկը այդ է պահանջում . . . հա, հա, հա . . .

ՄԻՀՐԱՆ. Եւ իրաւունք ունի . . . որովհետեւ . . .

ՅՈՒԱԿ. Որովհետեւ ի՞նչ, հա, հա, հա . . .

ՄԻՀՐԱՆ. Որովհետեւ, ասում եմ, աշխարհիս մէջ բոլոր
ընտիր բանաստեղծները, գեղարուեստագէտները և վիպասան-
ները երկայն մազեր են ունեցել, ինչպէս օրինակ (հետզհետէ
վրայ տալով) Հայնէն, Բայթոնը, Շիլլերը, Շէքսպիրը, Պուշ-
կինը, Ալֆոնս Դօդէն, Ադէքսանդր Դիւման, Տալստօյը, (այս
միջոցին Յոլակը նրա յիշած անունները մատներով վրայ
համարում է շուտ շուտ):

ՅՈՒԱԿ. (Յանկարծ ընդմիջելով) Վիկտօր Հիւգօն:

ՄԻՀՐԱՆ. Զէ՛, նա վերջում քաշալ էր:

ՅՈՒԱԿ. Որովհետեւ ձերացել էր . . . ասել է՝ թէ պատ-
րաստ ես:

ՄԻՀՐԱՆ. Աննամանիս խոնարհ ծառան եմ:

ՅՈՒԱԿ. Եթէ այդպէս է՝ նա քոնն է:

ՄԻՀՐԱՆ. Քո չնորհիւ, այո՛, նա իմն է. միայն քո չնորհիւ,
Յոլակ:

ՅՈՒԱԿ. Ինչո՞ւ իմ չնորհիւ և ոչ քո բանաստեղծութեան,
որ միշտ և անդադար կարգում է նա:

ՄԻՀՐԱՆ. Ո՛չ, ո՛չ, քո չնորհիւ միայն: Քո միջնորդութիւնը,
որ չը լինէր . . .

ՅՈՒԱԿ. Այդ իմ պարտքն էր:

ՄԻՀՐԱՆ. Մեծ վեհանձնութիւն քո կողմից:

ՅՈՒԱԿ. Ի՞նչ վեհանձնութիւն:

ՄԻՀՐԱՆ. Շատ վսեմ . . . ես ամաչում եմ . . . ես մեղաւոր եմ:

ՅՈՒԱԿ. Զեմ հասկանում:

ՄԻՀՐԱՆ. Բայց ես գիտեմ, թէ ես ինքս էի որ լրագրոր-
ներում քեզ շարունակ պախարակում էի, ժողովրդի տգրուկ
հռչակելով, վամպիր անուանելով և այլն. բայց այսօր իմ բոլոր
արածներին դէմ դու վճարում ես անսահման վեհանձնու-
թեամբ . . . վեհանձնութիւն, որից զուրկ եմ ես գլխովին, այո,
զուրկ: Բայց բանաստեղծական փառ երևակայութիւնս է մեղա-
ւոր . . . կը քաւեմ, այո, կը քաւեմ ես իմ հին մեղքերը . . .
դու վամպիր չես, դու ժողովրդի չը ճանաչած բարերար հայրն
ես, դու Ստոտածանից ուղարկուած միակ պաշտպանն ես մեր
տառապեալ ժողովրդի, որ . . .

ՅՈՒՆԱԿ. (Կողմը) Սկսեց. (Նրան) ի՞նչ ես ասում, Միհրան:

ՄԻՀՐԱՆ. Ես երևակայում էի, որ իմ թշնամիների մէջ
դու ես առաջինը . . . ամիս, ուր էր թէ՛ ես կարկամէի այս բոլորիս:

ՅՈՒՆԱԿ. Ի՞նչ աւելորդ խօսքեր են:

ՄԻՀՐԱՆ. Ո՛չ, ո՛չ, սիրելի բարեկամ, ոտից ցլուլիս մեղաւոր
եմ. (ընկնում է նրա ոտները) ներքի ինձ, ներքի, հրեշտակդ
իմ, ես քեզ դաւաճանել եմ, ամբաստանել . . . այսուհետեւ ես
կը հռչակեմ քո անունը իմ բանաստեղծութիւնների մէջ . . .
դու կը լինիս իմ իդէալը մինչև կեանքիս վերջը:

ՅՈՒՆԱԿ. Վեր կաց, վեր կաց, Միհրան, ամօթ է:

ՄԻՀՐԱՆ. (Վերկենդարձելով) Այո, ամօթ, բիւր ամօթ ինձ
համար, որ չը կարողացայ ճանաչել իմ մտերիմ բարեկամի
պարզ ու անխարդախ սիրտը. (կըկին ընկնելով նրա ոտները)
աղաչում եմ, Յոլակ, ներքի ինձ . . . ներքի քո անառակ եղբօրը:

ՅՈՒՆԱԿ. (Վերկացնելով) Բաւական է, բաւական, եթէ
դու այդպիսի բաներ ես անելու, կերթամ, կը հեռանամ:

ՄԻՀՐԱՆ. Իսկ ես ինձ կը մահացնեմ, եթէ չը ներես:

ՅՈՒՆԱԿ. Ես վաղճ եմ ներել . . . մոռացել անցեալը:

ՄԻՀՐԱՆ. Ո՛հ, օրինակելի մարդ, անզուգական բարե-
բար. . . Աննամանիցս երիցս աննաման բարեկամ:

ՅՈՒՆԱԿ. Լաւ, բաւական է, (կողմը) Ժամանակ է սկսելու.

(Նրան) առ, առ այս նամակը, կարգաւ և պատասխանը պատ-
րաստիր: . . . Փոքր յետոյ ես կը գամ և կը տանեմ յանձնելու
օրիորդին, մնաս բարեաւ:

ՄԻՀՐԱՆ. Դու նամակ է՞լ ես քերել օրիորդից: Ո՛հ, բազ-
մապատկուեցան բանաստեղծական խանդն ու անիւն իմ մէջ . . .
գողտրիկ տէմաներն իրար յաջորդում են մտքիս մէջ . . .
բայց ուշ ու միտքս ինձ կարծես պիտի դաւաճանեն. (գլու-
խը ընկնելով) ես . . . ես . . . ուշաթափում եմ, Յոլակ . . .
(ընկնելով նրա վրայ) կորցնում եմ ինձ:

ՅՈՒՆԱԿ. Պօետ, մի չփոթուիր, մի կորցնիր դու քեզ . . .
զգաստացիր, եթէ ոչ՝ ամեն ինչ կորած է:

ՄԻՀՐԱՆ. Այո, վտանգաւոր դրութիւն . . . նախանձեղի
և աննախանձեղի . . . ցանկալի և ո՛չ ցանկալի . . .

ՅՈՒՆԱԿ. Ուշքի եկ, Միհրան, պատրաստիր, նա անհամբեր
սպասում է, ցտեսութիւն, ես գնում եմ:

ՄԻՀՐԱՆ. Բայց ո՛չ, կաց, Յոլակս, կաց, ես իսկոյն պա-
տասխանը կը պատրաստեմ:

ՅՈՒՆԱԿ. Ո՛չ, արգելք չեմ ուզում լինել: Սյդպիսի ժամա-
նակ բանաստեղծը պէտք է միայնութիւն որոնէ:

ՄԻՀՐԱՆ. Արդարեւ:

ՅՈՒՆԱԿ. Ուրեմն ցտեսութիւն:

ՄԻՀՐԱՆ. Բայց սպասիր կարգամ քո ներկայութեամբ:

ՅՈՒՆԱԿ. Քաւ լիցի, ես իրաւունք չեմ համարում ինձ:

ՄԻՀՐԱՆ. Ես խնդրում եմ:

ՅՈՒՆԱԿ. Չեմ կարող:

ՄԻՀՐԱՆ. Աղերսում եմ:

ՅՈՒՆԱԿ. Իզո՛ւր:

ՄԻՀՐԱՆ. Պաղատում եմ:

ՅՈՒՆԱԿ. Երբէք:

ՄԻՀՐԱՆ. Ոտքերդ ընկած . . . (ուզում է չոքել):

ՅՈՒԱԿ. (2ը թողնելով) Եթէ դարձեալ կը շարունակեմ...

ՄԻՀՐԱՆ. Կրկին կը խնդրեմ:

ՅՈՒԱԿ. Կը նեղանամ:

ՄԻՀՐԱՆ. Կրկին կը պաղատեմ, կ'աղաչեմ, կ'արտասուեմ, կը լամ, կը փարիմ վզովդ:

ՅՈՒԱԿ. Որ ինչ անեմ:

ՄԻՀՐԱՆ. Որ մնաս...

ՅՈՒԱԿ. Ինձ մօտ կարդաս:

ՄԻՀՐԱՆ. Այո:

ՅՈՒԱԿ. Ո՛չ, ուրիշի գաղտնիքների մէջ մտնելու սովորութիւն չ'ունիմ, եթէ մնամ՝ այլևս չեմ դալ յաւիտեան:

ՄԻՀՐԱՆ. Անողորմի՛կ Յորակ, գնա՛ ուրեմն. այո՛, գնա՛, բայց շուտ եկ:

ՅՈՒԱԿ. Ասացի որ կը գամ:

ՄԻՀՐԱՆ. Այո, շուտ եկ, ես անհամբեր կըսպասեմ:

ՅՈՒԱԿ. Սպասիր:

ՄԻՀՐԱՆ. Մի ժամից յետոյ պատրաստ կը լինի:

ՅՈՒԱԿ. Լաւ, կը գամ:

ՄԻՀՐԱՆ. Ա՛խ, ինչ եմ ասում, երեք քառորդ ժամից յետոյ:

ՅՈՒԱԿ. Այստեղ կը լինիմ:

ՄԻՀՐԱՆ. Կէս ժամից:

ՅՈՒԱԿ. Կէս ժամից:

ՄԻՀՐԱՆ. Քառորդից յետոյ:

ՅՈՒԱԿ. Քառորդից յետոյ կը գամ:

ՄԻՀՐԱՆ. Տասն րոպէ միայն՝ և ինձ բաւական է:

ՅՈՒԱԿ. Աւելի լաւ:

ՄԻՀՐԱՆ. Հինգ րոպէն էլ հէրիք է:

ՅՈՒԱԿ. Եւս առաւել շատ լաւ:

ՄԻՀՐԱՆ. Թէկուզ մի րոպէից յետոյ:

ՅՈՒԱԿ. Ուրեմն իսկոյն յետ կը գամ, ցտեսութիւն (գնում է):

ՄԻՀՐԱՆ. (Յետեւից) Գնացիր, իսկոյն. իսկոյն յետ արի, չ'ուշանաս:

ՅՈՒԱԿ. (Դռնից) Լաւ, չեմ ուշանայ, միւս սենեակում կըսպասեմ:

ՄԻՀՐԱՆ. (Նամակը քննում է եւ սկսում է կարդալ) «Սիրելի Միհրան, մօտիկ ապագայի ընկեր»:

Ո՛հ, ինչ գողտրիկ խօսքեր, «նման գնմանն սիրէ», ես բանաստեղծ, իսկ նա բանաստեղծուհի, երևակայում եմ, թէ ինչ կրակի կտոր է լինելու մեր ապագայ ժառանգը կամ ժառանգուհին: (Հարունակում է) «Մեր երկուքիս անգուգական րարեկամ Յուլիի ձեռքով ուղարկելով նամակս՝ նրա բերանով էլ յայտնում եմ միակ ցանկութիւն ու պայման...»:

ՅՈՒԱԿ. (Ներս գալով) Ահա և ես:

ՄԻՀՐԱՆ. Բարով, հազար բարի, իսկոյն, իսկոյն:

ՅՈՒԱԿ. Պատասխանը:

ՄԻՀՐԱՆ. Այս րոպէին, կաց նամակը վերջացնեմ:

ՅՈՒԱԿ. Ուրեմն ցտեսութիւն, (գնում է):

ՄԻՀՐԱՆ. Իսկոյն, Իսկոյն, (Հարունակելով) «Առաջարկութիւնդ կը յարգեմ, եթէ պայմանս կատարես: Կը ցանկայի, որ բանաստեղծական հանձարիդ ու տաղանդիդ համապատասխանէին նաեւ հերարձակ եւ գանգրահեր բանաստեղծական գլուխդ: Սպասելով անհամբեր երկտողիս պատասխանին, մնամ միշտ քոյդ ննմանս» (Համըրելով նամակը) Անպատճառ, սիրելի Աննմանս, անպատճառ:

ՅՈՒԱԿ. (Ներս գալով) Պատրաստ է:

ՄԻՀՐԱՆ. Ա՛հ, դու ես, իսկոյն, իսկոյն...

ՅՈՒԱԿ. Մի րոպէից շատ անցաւ:

ՄԻՀՐԱՆ. Ներիր, կաղաչեմ, այս րոպէիս, այս վայրկենիս:

ՅՈՒԱԿ. Ցտեսութիւն. (գնում է):

ՄԻՀՐԱՆ. (Յետեւից) Այո, ցտեսութիւն, բայց շատ չ'ուշանաս... հինգ րոպէից յետոյ: Պէտք է շտապել. (նստում է

գրասեղանի մօտ)։ Աննաման և Միհրան... երկուսն էլ նոյնահնչիւն, սէ, բնութեան հրաշալիք... սէ բանաստեղծութիւն... դու մուգաների քաղցրահնչիւն մեղեդի, ահա գրիչս առնում եմ... օրհնիր իմ վաստակս և թող չափազանց բուռն խանդս իւր բաժինը հանէ նախ Յոլակիս—իսկ ապա հոգւոյս հատորին—գեղեցկուհիների թագն ու պսակ Աննամանիս... (երգում է)։

Ընկեր եմ ասում, աստուածավախ,
ճշմարիտ ընկեր և այլն։

ՅՈՒԱԿ. (Ներս գալով) Այժմ, ի հարկէ, կարող եմ ստանալ։
ՄԻՀՐԱՆ. Պատասխանը...

ՅՈՒԱԿ. Այո, 5 ռոպէս անցաւ։

ՄԻՀՐԱՆ. Ա՛խ, ներիր, սիրելի բարեկամ, բոլորովին յափշտակուած... հէնց այժմ կրսկսեմ պատասխանել։ 10 ռոպէից յետոյ պատրաստ կը լինի, (Յոլակը գնում է)։ Սկսենք, ամօթ է, (սկսում է գրել, քարճրածայն արտասանելով գրածը)։

«Զօն առ հատընտիր և անգուգական ընկեր իմ Յոլակ»։

Հիանալի դուրս եկաւ։ Յոլակ... ալ... ալ... ալ... այո, ալով վերջացնենք։ Տեսնենք ի՞նչ խօսքեր կան. (Ճմռելով ճակատը) եկան, իրար յետից, եկան... փայլակ, արեգակ, լուսնեակ, դիմակ, դմակ, դանակ, անդանակ, արգանակ, գլանակ, մօծակ, կարկանդակ, Աշտարակ, աշտանակ, փտակ, գետակ, առուակ, սահնակ, աւազակ, աւանակ... բաւական է... սկսեմ... (ցածր եղանակում է «Մեր հայրենիքի» եղանակը եւ ապա գրում շարադրածը՝ կարդալով քարճրածայն)։

Յոլակ, դէմքդ փայլակ Յոլակ,
Փայլում ինչպէս արեգակ։

Երեսիս չեմ դըրել դիմակ,
Ինձ չը մորթես անդանակ։

Շիկ... հիանալի է, բայց բաւական չէ, սկսենք երկրորդ տունը. —

Մեղայ, բիւր մեղայ, Յոլակ ջան,
Յուրիդ մատաղ է Միհրան։

Որին տուիր իւր Աննաման,
Մեղայ, մեղայ, Յոլակ ջան։

Հուր և կրակ թափուեց գրչիցս մի ըրպէում։ Այժմ Աննամանիս անուշով, բայց անպատճառ, «Երբ ալէկօժի» եղանակով, այո, այո, իր սիրած երգն է։ Օ՛հ ուրեմն ընդ առաջ շարժիր, սի՛ւ իմ գրիչ պատուական։

Երբ, Աննաման դու գեղեցիկ.
Իմ մազերը երկարի,
Արգելքները վերանալով
Սիրտդ ինձի պատկանի։

Անսպասելի յառաջադիմութիւն... երգենք, տեսնենք ի՞նչպէս է դուրս գալիս (սկսում է երգել, մտնում է Յոլակը)։

ՅՈՒԱԿ. Այժմ յուսամ թէ...

ՄԻՀՐԱՆ. Վատ ժամանակ եկար, իսկոյն, Յոլակ ջան...

Քիչ էլ սպասիր ու կաւարտեմ, յատուկ ներողութիւն...

ՅՈՒԱԿ. Ոչի՛նչ, ոչի՛նչ, շարունակիր։

ՄԻՀՐԱՆ. Այո, Յոլակ, 15 ռոպէից յետոյ պատրաստ կը լինի... բիւր անգամ ներողութիւն. (Յոլակը գնում է) որտեղ մնացի... հա.—Արգելքները վերանալով՝ սիրտդ ինձ պատկանի. —

Բանաստեղծիս բուռն խանդը
Վառ բորբոքուած քո սիրով
Քանի գնում, վառում է ինձ,

Գթան, փրկիր չտապով:

(Մտնում է Դաւիթը եւ տեսնելով նրան ոգետորուած կանգնում է դռան մօտ, լսում է եւ յետեւից ձեռք ու ոտքով նմանեցնում է նրա շարժումներին):

Այսօրուանից ամէն հնարք

Դործ կը դնեմ օն և օն՝

Հայ աշխարհի մուսայից մէջ

Մի օր փայլել զերթ Բայրօն:

ԴԱԻԻԹ. (Կողմը) Էլի աղէս անսաղ աշըղ ա դառել:

ՄԻՀՐԱՆ. Սահուն և ողորկ, ինչպէս ներգաշնակ մեղեդին սոխակի... երբէք այսպէս յաջողած չէր ինձ: Քո սէրը, այս, Աննաման, որ զինեց ինձ: Ուխտում... երգում եմ զո՞հ բերել այդ սրբազան սիրոյն ամէն բան, ինչ որ ինձ համար թանկ ու անգնահատելի է այս աշխարհում, միայն թէ արժանանայի քո անկեղծ սիրոյն...

ԴԱԻԻԹ. (Կողմը) Ինչ թունդ դէնն ա տալի տօ... չը նուազի բիրդան:

ՄԻՀՐԱՆ. Միայն թէ օգնէիր ինձ միշտ և յարատեւ անչէջ պահելու իմ մէջ այն երկնային բանաստեղծական սրբազան հուրը, որ շատ քչերին է պահական այս աշխարհում... միայն թէ...

ԴԱԻԻԹ. (Կողմը) Որ թողնեմ սա շատ ճեռօք պըտի անի. (մօտենալով նրան) աղա...

ՄԻՀՐԱՆ. (Ուշաքերուելով) Հը՞, հը՞... ինչ կայ Դաւիթ... եկաւ...

ԴԱԻԻԹ. Ո՞վ եկաւ աղա:

ՄԻՀՐԱՆ. Յոլակը, Յոլակը:

ԴԱԻԻԹ. Չէ աղա, Յոլակը շատ սպասեց ու գնաց... էս գիրն էլ տուեց, որ քեզ տամ. (տալիս է մի նամակ):

ՄԻՀՐԱՆ. Ո՞ւր դնաց:

ԴԱԻԻԹ. Ի՞նչ գիտեմ աղա... հալըթ էդ թղթումը գրած կընի... իրանց Թորոսն եկել էր, կանչեց՝ տարաւ:

ՄԻՀՐԱՆ. Հա՞ն. գնահ տեսներ ի՞նչ է գրում. (Դաւիթը կարդում է) «Սիրելի Միհրան, այս բուպէիս մեր Թորոս ծառան յետեւիցս եկել էր: Մաթոս աղայէնց տնից կանչել են ինձ շտապով, չը գիտեմ հայրն է՝ թէ աղջիկը. կաշխատեմ շուտով վերադառնալ եւ պատասխանդ վերցնել, իսկ եթէ չը կարողացայ՝ Թորոսին կ'ուղարկեմ: Ներիր, որ քեզ չը խանգարելու համար ներս չ'եկայ: Եթէ պատասխանդ դեռ չես աւարտել՝ շտապիր, Յոլակ» Այս ի՞նչ կը նշանակէ, (կանչում է) Դաւիթ. (Ներս է գալիս Դաւիթը) վաղմւց է գնացել, Դաւիթ:

ԴԱԻԻԹ. Խելի վախտ ա, աղա:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Տէր ողորմած Աստուած. դու վերջը բարի անես. (Նրան) գնալիս ոչինչ չասաց:

ԴԱԻԻԹ. Ըսկի մի խօսք, աղա:

ՄԻՀՐԱՆ. Բաս դու ինձ ինչո՞ւ իմաց չը տուիր:

ԴԱԻԻԹ. Ի՞նչ իմաց տայի, աղա, (Կողմը) Յոլակը մի օյին ունի՝ համա գլխի չեմ ընկնում:

ՄԻՀՐԱՆ. Ի՞նչ ես փնթփնթում:

ԴԱԻԻԹ. Ըսկի, աղա... ասում եմ գնաց, համա ասաց՝ թէ կը հարցնի, ասա շուտ կը գամ:

ՄԻՀՐԱՆ. Բաս ո՞ւր է չ'եկաւ:

ԴԱԻԻԹ. Ես ի՞նչ գիտեմ աղա:

ՄԻՀՐԱՆ. Չօռ իմանաս:

ԴԱԻԻԹ. (Կողմը) Եմ...

ՄԻՀՐԱՆ. Գրող իմանաս:

ԴԱԻԻԹ. (Կողմը) Հիմա էլ կասի ցաւ իմանաս. (Նրան) ախր...

ՄԻՀՐԱՆ. Յաւ իմանաս:

ԴԱԻԻԹ. (Կողմը) Տեսնա՞ք, (Նրան) աղա ջան...

ՄԻՀՐԱՆ. Ջանը գնա քու հօրն ասա, անպիտան....

ԴԱԻԻԹ. Ախր իմ մեղքն ի՞նչ ա:

ՄԻՀՐԱՆ. Մեղքդ այն է, որ բարակամիտ ես.... տխմար անասուն:

ԴԱԻԻԹ. Ես էլ կուզէի հաստամիտ ընել, համա որ ուսում չեմ առել, ես ի՞նչ անեմ, աղա:

ՄԻՀՐԱՆ. Հաստամիտը դու ես... գետինը մտնես:

ԴԱԻԻԹ. Հա, աղա ջան, ես եմ:

ՄԻՀՐԱՆ. Քեզ ասում եմ, դու ես, դու:

ԴԱԻԻԹ. Հա, ես եմ էլի, աղա... բարակամիտն էլ եմ ես՝ հաստամիտն էլ:

ՄԻՀՐԱՆ. Այո....

ԴԱԻԻԹ. Հա, աղա ջան, հա:

ՄԻՀՐԱՆ. Ցանցանու:

ԴԱԻԻԹ. Թող ընի, աղա, (կողմը) էլի բաց արաւ մէ-
շօկի բերանը:

ՄԻՀՐԱՆ. Տխմար....

ԴԱԻԻԹ. Ղաբուլ եմ, աղա:

ՄԻՀՐԱՆ. Վայրենի....

ԴԱԻԻԹ. Եդ էլ հէսաբի:

ՄԻՀՐԱՆ. Սարի արջ....

ԴԱԻԻԹ. Սարի արջ:

ՄԻՀՐԱՆ. Արջի Գօթօթ....

ԴԱԻԻԹ. (կողմը) Փռչմանեց... պտկացրեց, (նրան)
դրան էլ եմ դաբուլ, աղա:

ՄԻՀՐԱՆ. Խենթ....

ԴԱԻԻԹ. Ասա, աղա, ասա:

ՄԻՀՐԱՆ. Դատարկապորտ....

ԴԱԻԻԹ. Ես ինչխօսք էր տօ... (նրան) ի՞նչ, աղա ջան....

ՄԻՀՐԱՆ. Վօն, դուռակ....

ԴԱԻԻԹ. (կողմը) Փառք Աստծու պրծաւ... հըմի հէրթն

իմա ա. (նրան) մի բան ասեմ՝ աղա... (մատը պարանոցին տանելով) Էս տեղս հասցրիր, հէրիք ա....

ՄԻՀՐԱՆ. Քեզ ասում եմ, վօն... չուղակ...

ԴԱԻԻԹ. (կողմը) Սատանէն ասում ա բօղաղից բռնի չռփի գետնին հա... (նրան) վօն հա վօն... բան ես սովորել էլի... չես ուղում՝ վօն կանեմ... շատ եմ վախում քու վօնիցը (շարժում է դէպի դուռը), բ՛ն, Էս էլ քու վօնը... էլ յետ չը կանչես, թէ չէ՝ եկողը չեմ... դուզ Մաթոս աղոնց տուն. (դուռն է գնում):

ՄԻՀՐԱՆ. (կողմը) Այս ի՞նչ արի... իրաւ չը գնայ անի-
ծուածը (յետեւից վազելով) էլի խռովեցիր, (ըննում՝ քա-
շում է ներս) արի, արի, Դաւիթ ջան... ես մեղայ Աստծոյ... հանաք էի անում:

ԴԱԻԻԹ. Հանաքս որն ա, աղա... ես ի՞նչ անեմ, թէ Յովակ աղէն գնաց:

ՄԻՀՐԱՆ. Ի հարկէ դու ի՞նչ անես... յիմարը նա էր, որ գնաց:

ԴԱԻԻԹ. Դրուստն ասեմ, աղա, համբերութիւնս հատել ա... թէ մէկ էլ չարացել ես՝ դուզ գնալու եմ Մաթոս աղի աղջկայ մօտ գանգատ: Դու բնեկց գիտես չեմ իմանում:

ՄԻՀՐԱՆ. (կողմը) Դրուստ, չը լինի՞ սա ամէն բան գիտի, (նրան) ի՞նչ ես իմանում:

ԴԱԻԻԹ. Լաւ, էլ ի՞նչ ես թաղցնում, աղա... համա լաւ աղջիկ ա ես ու իմ Աստուածը:

ՄԻՀՐԱՆ. Ո՛վ տօ անիծած:

ԴԱԻԻԹ. Անիմանը, ո՛վ:

ՄԻՀՐԱՆ. (Չեռքը նրա բերանին դնելով) Սուա՛ս՛ս՛. մարդու բան չ'ասես. (հանում 3 բուրդլիանոց է տալիս) ան ու բերանդ փակ պահիր:

ԴԱԻԻԹ. (Առնելով փողը) Չեմ ասի, աղա, չէ. (կողմը) լաւ խազնա եմ գտել, մեր տղայ:

ՄԻՀՐԱՆ. (Դրսում՝ ոտներն ճայն է լսում) Սուս՝ս՝ս... տես ո՞վ եկաւ:

ԴԱԻԻԹ. Եմ, էս մնաց եկան, չիմացայ, էս սահաթիս, աղա. (գնում է դուրս):

ՄԻՀՐԱՆ. Ո՞վ պէտք է լինի... (Դաւիթը ներս է գալիս) հը՛, ո՞վ էր:

ԴԱԻԻԹ. Թորոսն էր, աղա... մի գիր էր բերել ու մի շուշա .. առ աղա ջան (տալիս է):

ՄԻՀՐԱՆ. Ինքն ինչ եղաւ:

ԴԱԻԻԹ. Շատ վռազ էր, գնաց աղա ջան:

ՄԻՀՐԱՆ. Լաւ, գէ՛հ դու գնա դուրսն սպասիր, թէ մարդ գալիս լինի՝ շուտ արի ինձ իմաց արա:

ԴԱԻԻԹ. Բաշուստա, աղա. (գնում է):

ՄԻՀՐԱՆ. (Նայելով ծրարին) Յոլակի ձեռքն է, ինչ պէտք է լինի. (քանում, կարդում է) «Սիրելի՛ Միհրան, աչքդ լո՛յս, այս երեկոյ թէյի ենք հրաւիրում Աննամանի մօտ՝ ես եւ դու. իսկոյն պատրաստուիր: Սրա հետ ուղարկում եմ եւ մի շիշ, որի մասին կարդա՛ ծրարիս մէջ գետնդած Աննամանի նամակում, ես գործով գնացի սուղը... իսկոյն կը վերադառնամ, Յոլաւ:— Ո՞վ երջանկութիւնն .. սիրելի Յոլակ, ագնիւ բարեկամ... բայց տեսնենք Աննաման ինչ է գրում. (քննում կարդում է) «Հոգոյս հատոր դու Միհրան, նամակիս պատասխանին չսպասելով հաճեցրի հօրս եւ խնդրում եմ պ. Յոլակի հետ շնորհ բերել երեկոյեան մեզ մօտ թէյի: Ուղարկում եմ մի շիշ անուշահոտ Չлексиръ Melange.— մագերը երկայնացնելու դեղ է դա, իսկոյն քսիր մագերիդ, բեխերիդ եւ միրքիդ... հետգնետէ գործածելով՝ կարճ միջոցի մէջ մագերդ կերկարին որպէս քանաստեղծի մագեր: Լսեցի 'ի պատասխան նամակիս մի գեղեցիկ քանաստեղծութիւն եւ գրել, անհամբեր սպասում եմ մօտս կարդալու: Աննամանը:

Ո՛հ, որչափ հոգատար սիրտ ունի նա... իսկոյն, իսկոյն կօծեմ մագերս քու անուշահոտ դեղով... իսկոյն կը պատրաստուեմ... (կանչում է) Դաւիթ, Դաւիթ....

ԴԱԻԻԹ. (ներս գալով) Էստեղ եմ, աղա:

ՄԻՀՐԱՆ. Մնա այստեղ եւ եթէ Յոլակը կը գայ՝ ասա թող այստեղ սպասի. մինչև ես դուրս գամ .. գնում եմ շորերս փոխելու:

ԴԱԻԻԹ. Լաւ, աղա ջան:

ՄԻՀՐԱՆ. Եթէ ուրիշ մարդ գալու լինի՝ չընդունես:

ԴԱԻԻԹ. Շատ լաւ:

ՄԻՀՐԱՆ. Ուրիշի համար տանը չեմ:

ԴԱԻԻԹ. Լաւ, աղա ջան, լաւ:

ՄԻՀՐԱՆ. Ուշքդ վրէժ պահիր:

ԴԱԻԻԹ. Վրէժ ա, աղա. (Միհրանը գնում է):

Տ Ե Ս Ի Լ Ը.

ԴԱԻԻԹ, ՅԵՏՈՅ ՅՈԼԱԿ ՈՒ ՄԻՀՐԱՆ.

ԴԱԻԻԹ. Վաղահ, ըստեղ մի բան կայ... տմա հըլա չեմ հասկացել... բէյնիս չի մտել: Յոլակ աղէն լաւ խաբեց... ըսկի տեղից ժած չի եկել... հըլէն դուսը թախ ա կացել... գիրն ու շուշէն էլ, խոստովանը պահէր՝ նա տուեց .. ասաւ աղիդ կասես, որ Թորոսն ա բերել... մին մանէթ փէշքաշ էլ նա տուեց... ինչ կուզի ըլնի՝ ես իմ մանէթի տէրն եմ... ջհանդամը, ում գլուխը կը ցաւի՝ թող ցաւի, մէջն ինչ ունիմ: Գնամ տեսնեմ ինչ ըլաւ (գնում է դուրս, դուռը քանալիս երեսում է Յոլակի գլուխը):

ՅՈԼԱԿ. Հը՞, սրտեղ է... ո՞ւր գնաց:

ԴԱԻԻԹ. Ներսի օթախումն ա, աղա:

ՅՈԼԱԿ. Շուշէն ինչ արաւ:

ԴԱԻԻԹ. Հետք ներս տարաւ:

ՅՈՒԱԿ. Լաւ, դէ՛հ դու գուրս արի:

ԴԱԻԻԹ. Ոնց որ կուզես աղա, (Դուրս է գնում Յուակը ներս է գալիս):

ՅՈՒԱԿ. Մեր ողորմելի բանաստեղծը կարծում է, որ իր ստացած կեղծ նամակները յիրաւի Աննամանիցն են... ասուշը չը գիտէ, որ նա բանից երբէք տեղեկութիւն չունի եւ իր անունն անգամ չի ուզում լսել: Մեծ ակնորժակով սպասելիս կը լինի, որ երեկոյեան նրա մօտ թէյ խմի... հօրս ցաւը կը խմես դու... Սօտեցաւ ժամը .. հէնց հիմի դու կըստանաս քո բոլոր ավեղցփեղ թղթակցութիւնների պատասխանը .. պատասխան՝ որ մինչև գերեզմանդ չես մոռանալ եւ այնուհետեւ վերամակիղ համեմատ կը ձգես ոտքդ... ողորմելի թշուառական .. ինքնակուշ բանաստեղծ... (նայելով դէպի Միհրանի մտած սենեակը) բայց ինչ շատ է ուշանում... միթէ դեռ չէ....

ՄԻՀՐԱՆ. (Ներսի սենեակից) Վայ իմ արեւին... էս ինչ եղաւ... պլոկուեցի... օգնեցէք... օգնեցէք... Դաւիթ... Դաւիթ...

ՅՈՒԱԿ. Melange-էն ներկոծել է. (Դաւիթը ներս է գալիս) քեզ պահիր .. չը ծիծաղես՝ թէ չէ հոգիդ կը հանեմ, (դէպի ներս) ինչ է եղել Միհրան, ինչ խաբար է:

ՄԻՀՐԱՆ. (Ներսից) Դու ես 'ի սէր Սստծոյ, օգնութեան հասիր. Յոլակ, այս ինչ դժբախտութիւն էր, Տէր Աստուած:

ՅՈՒԱԿ. Եկայ.... մի վախիր (ներս է փախչում):

ԴԱԻԻԹ. Ի՞նչ պրտի ըլնի.... մարդ խմանայ:

ՅՈՒԱԿ. (Ներսից) Վայ, քորանամ ես, ներս արի, ներս, Դաւիթ. (Դաւիթը ներս է գնում եւ երկուսով Միհրանի ձեռքից աջ ու ձախ կողմերից ըռնած դուրս են բերում գլխի մագերը, միջուքը, եւ քեւերը բոլորովին թափուած: Դաւիթը կուշ ու ձիգ է լինում, որ իրան պահի եւ չըծիծաղի) էս ինչ բան է, մի ասա է՛հ, Միհրան, չեմ հասկանում:

ՄԻՀՐԱՆ. Բայց այդ անկարելի բան է... անպատճառ ապտեկումն են սխալուել... ես դատարանով կը պահանջեմ, հոգիները կը հանեմ.... (Դաւիթը, որ շարունակ օրօրում եւ իրան զսպում էր՝ չի կարողանում դիմանալ եւ թռնդ ծիծաղում է) ինչ ես ծիծաղում, տօ գետինը մտած (ծիծաղում է եւ ինքը):

ԴԱԻԻԹ. Վալլահ, աղա, չը կարացի պահեմ, բիրդան դուրս պրծաւ, հա, հա, հա, հա....

ՅՈՒԱԿ. Հա, հա, հա, հա....

ՄԻՀՐԱՆ. Չօռ ու ցաւ... ինչ էք հոհուում:

ՅՈՒԱԿ. (Սեղանի վրայից հայելին վերցնում եւ մօտեցնում է Միհրանին) Տես ակսր է՛հ.... մնց չը ծիծաղենք, թէ կարող ես՝ դու էլ մի ծիծաղի, հա, հա, հա....

ՄԻՀՐԱՆ. (Իրան պատկերը հայելու մեջ տեսնելով) Դրուստ, էս ինչ այլակերպ բան եմ եղել տօ:

ՅՈՒԱԿ. հա, հա, հա...

ԴԱԻԻԹ. (Յոյց տալով Միհրանի վրայ) Հըլա երես ունի... ամա Յոլակ աղի պէս լաւ դալաք ըսկի չի ըլնի, հա, հա, հա...

(Տեսարան).

Վարդգայր:



ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՋԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՋԱՌ- ԻՈՒՄԵՆ ՀԵՏԵԻԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊՍՏԻԻ, կօմ. հեղ. Զուգերմանի. [Ժարգմ. Ա. Թարխանեան
զինն է 60 կ.
ԿՕՔՏՕՐ ՇՏՕՔՄԱՆ, կօմ. հեղ. Իրաւնի . . . Ս. Հախումեան
. . . . 80 կ.
ՄՐՑՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ, վէպ, . . Ս. Հախումեան
. . . . 40 կ.
200,000 ՎՈՒ. հեղ. . . . Փառնակէս
. . . . 30 կ.

„ԹԱՏՐՈՆ“ № 1.

(Հանդէս դրակ. և [Թատ.])

(Բովանդակութիւն՝ Յառաջարանի տեղ. Սկապէնի արարքները,
կօմ. Մոլիերի. Հայոց [Ժատրոնի սկզբնաւորութիւնը [Թիֆլիսում.
Թատրոն, լեւմ և լեզու. Գէորգ Միրազեանց, կենսագր.. Թատրոնի
լուսատու աստղերը. Կանոններ դերասանների համար. Թատրո-
նական քրոնիկոն արտասահմանից և Պետերբուրգից:

Պիեսներ՝ Միւս անգամ. Բանաստեղծ և Գարընապետ:

(Պատկերներ՝ առաջին հայկական խումբ.

և Գէորգ Միրազեանց)

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼԻ:



18859

„ԹԱՏՐՈՆ“

ԴՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԳԷՍԻ

1894 թուակ. բաժանորդագրութիւնը շարու-
նակւումէ:

Ցարեկան բաժանորդագին է 3 ոտրլի. օտարաքաղաքա-
ցիների համար 3 ո. 30 կ.

Դիմիկ հետեւեալ հասցեով Թիֆլիս, Александръ Тарханьянъ.

Թիֆլիսում բաժանորդագրութիւնը ընդունւում, հրատարակչի
մօտ՝ Սաղովաչիա փողոց, բժշկապ. Քիւչարեանցի տուն № 50

Մամուլի տակէ և շուտով լոյս կը տեսնէ
„ԹԱՏՐՈՆ“ հանդէսի II գիրքը:

Հրատարակիչ՝ Աղէքսանդր Թարխանեան

2013

